«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության, կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝Նաիրա Բարսեղյան

Ուսումնական հաստատություն՝ Եղ. Չարենցի անվ. թիվ 67 հիմնական դպրոց

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Ընտանեկան դաստիարակության առնչությամբ հանդես եկան 3 հիմնական ուղղություններ.

1. Պեստալոցին էր, որը տունը համարում էր բնական դաստիարակության հիմք, գտնում էր որ մարդկանց ընտանեկան հարաբերությունն առավել բնական հարաբերություններն են և դաստիարակությունը նույնպես, սակայն նա չէր ժխտում ուսումնական հաստատությունների դերը:

2. Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունն էր, նա ընտանիքը համարում էր էգոիզմի և երեսպաշտության բույն, բացասական կարծիք ուներ ընտանեկան դաստիարակության մասին:

3. Գտնում էր, որ երեխաների դասիարակությունն իրականացվում է դպրոցի, ընտանիքի, հասարակության համատեղ ջանքերով: Ընտանիքի ազդեցությունը երեխաների զարգացման և ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության համար ամուր հիմքը ծնողների միմյանց սերն է:

Առաջին պայմանը ընտանեկան համախումբն ու ձևավորումն է պարտքի պատասխանատվության խոր զգացումն է, երեխաների իրար նկատմամբ սիրո, բոլոր հարազատների նկատմամբ հարգանքի բարձր զգացողության և բարձր զգացմունքի ձևավորումն է: Ընտանեկան դաստիարակության երկրորդ պայմանը չափավորությունն է: երեխային չի կարելի անընդհատ պատժել կամ երես տալ բոլոր պահանջները կատարել: Երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնության կայունությունն է, այս դեպքում սկզբունքայնությունը վերաճում դառնում է վճռական: Չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական հումանիստական, կոլեկտիվիստական, աշխատանքային զգացմունքների ձևավորումն է և դաստիարակումը: Ընտանիքում կարևոր նշանակություն ունի երեխաների բարոյական այնպիսի որակների ձևավորում ինչպիսիք են մանկական հաղորդակցության դերը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականությունության համար հենքն է հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող - ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ծնող-ուսուցիչ կապի դրական ազդեցությունը սովորողների դաստիարակության, ուսումնառության, ընդհանուր զարգացման ու աշխարհաճանաչողության վրա:

Հետազոտության խնդիրը: Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է և անհրաժեշտ, որպեսզի ծնողն ու ուսուցիչը, միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ ու կարողություններ:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեխաների դաստիարակությունը ծնողների և ուսուցիչների համատեղ աշխատանքն է։ Ժան ժակ Ռուսոն ասում է, որ <<Ամեն հաջորդ դաստիարակող ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան հաջորդը>>։ Հետևաբար կրտսեր տարիքը թե՛ ուսման, թե՛ դաստիարակության գործում ավելի քան կարևոր է: Հայտնի մանկավարժ Սուխումլինսկին մի առիթով նկատում է «Իմ խոր համոզմամբ մանկավարժությունը պետք է գիտություն լինի բոլորի համար՝ և՛ ուսուցիչների, և՛ ծնողների։»

Մեր խմբագրմամբ՝ դաստիարակությունը պետք է առանցքային լինի բոլորի համար՝ և՛ ուսուցիչների, և՛ ծնողների։ Վերջիվերջո, նրանց երկուսի հոգածության առարկան երեխան է։ Առանց ծնողների և ուսուցիչների փոխադարձ ըմբռնման անհնար է լիարժեք դաստիարակությունը։ Վերջնարդյունքում պետք է ձևավորվի առողջ հոգեբանությամբ, սոցիալապես ակտիվ մարդ։

«Դպրոց ընդունվելու հետ միասին փոխվում է նաև երեխայի վիճակն ընտանիքում։ Նա ստանում է նոր իրավունքներ և պարտականություններ։ (Օրինակ՝ դպրոցականին պետք է հատուկ տեղ ու ժամանակ հատկացնել տնային հանձնարարությունները կատարելու համար։ Պետք է հաշվի նստել նրա ռեժիմի հետ։)[1]

Ժամանակակից մանկավարժության մեջ էական նշանակություն ունի ծնողների և ուսուցիչների համատեղ ներգրավվածությունը երեխաների դաստիարակության գործում։

«Ընտանիքների հետ հաջողված աշխատանքով առաջարկվում է, որ ուսուցիչներն ու ծնողները անհատական կապ պետք է հաստատեն միմյանց հետ։ Մանկավարժը պետք է անհատապես աշխատի երեխայի ծնողի հետ։ Ոչ ամեն ինչ կարելի է և պետք է քննարկել ծնողական ընդհանուր ժողովներին, բայց շատ բան կարելի է քննարկել աչք աչքի։ Ծնողների և ուսուցիչների միջև պետք է ձևավորվեն բարի և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ։»[2]

---

[1] Ա. Վ. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1977, էջ 87:

[2] Акутина С. П, Воспитание=Семья+школа//Классный руководитель., 2014, N 7, стр. 26.

Դեռևս խորհրդային դպրոցի ներկայացուցիչները նկատում էին, որ «Համագործակցության, փոխներգործության միջոցով ուսուցումը մանկավարժական հարաբերությունների սիրտն է, այն ձևափոխում է իշխանության և ձեռնհասության դինամիկան։

Ուսուցիչ-ծնող-երեխա, բոլորը դառնում են այդ երեխայի դաստիարակության մասնակիցներ»։

Ժամանակակից մանկավարժները նկատում են, որ լավ է, երբ ընտանիքի անդամներից որևէ մեկը մշտապես կապ է պահում դպրոցի հետ։ Եվ դա ոչ միայն պարզապես ինֆորմացիա ստանալու համար, այլ նաև, որպեսզի միասին քննարկեն երեխայի համատեղ դաստիարակության պլանները։[3]

Արևմտյան կրթական համակարգերը առաջ են քաշել մանկավարժական նոր տերմին՝ «ծնողների ներգրավվածություն», որը լայնորեն ուսումնասիրվում է հատկապես հասարակական կազմակերպությունների կողմից կատարվող հետազոտություններում և տարատեսակ կրթական զեկույցներում։

Ըստ Georgio primari educatin projekt- ի «Ծնողների ներգրավվածությունը. Հանձնարարական տնօրենների և ուսուցիչների համար »՝ տերմինը սահմանվում է հետևյալ կերպ. «Ծնողների ներգրավվածությունը» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտների հաջողությունների և ուսման բարելավման համար ինչպես տանը, այնպես էլ դպրոցում։ Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտների ակադեմիական առաջադիմության բարելավմանը։ « Ծնողների ներգրավվածությունը» տերմինը նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտների ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին»[4] :

Նույնաբնույթ մեկ այլ զեկույցում՝ «Վիլսոն միջին դպրոց. ծնողների ներգրավվածության քաղաքականություն» ծրագրով դպրոցը ծնողներին ներգրավվածության հետևյալ տարբերակներն է առաջարկում՝

[3] Колективная работа, Совместная работа учителья с родительями младших школьников, Молодой ученый, N 52, 2019, стр. 278։

[4] Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար. Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015, էջ 3։

1. Ծնողներին կտրամադրի անհրաժեշտ գիտելիքներ, թե ինչպես օգնել իրենց երեխաներին սովորել տանը:

2. Տրամադրել պարզ, երկկողմանի հաղորդակցություն դպրոցի և ընտանիքի միջև' դպրոցական ծրագրերի և երեխաների առաջադիմության հետ կապված:

3. Հնարավորություն ընձեռել օգտվել և համակարգել հանրությունը և ընտանիքների աջակցման ծրագրերը:

4. Օգնել ծնողներին զարգացնել ծնողական հմտություններ և նպաստող պայմաններ տանը, որ աջակցում են երեխային սովորելու ջանքերին:

5. Աջակցել ծնողներին որպես որոշում կայացնողների և զարգացնել նրանց առաջնորդության, կառավարման, խորհրդատվության և պաշտպանության դերերը:

6. Խրախուսել ծնողների մասնակցությունը դպրոցական միջոցառումներին' հաղորդակցության տարբեր միջոցներով, ինչպես օրինակ հեռախոսազանգերը, նամակները, տեղեկագրերը, կայքում տեղադրված հայտարարությունները և այլն:

Ռուս ուսուցիչները իրենց հետազոտություններից մեկում նկատում են, որ «Ծնողների հետ անհատական աշխատանքում մեծ օգնություն կարող է լինել օրագիրը, որում համառոտ գրի կառնվեն երկխոսությունները, առաջարկությունները և եզրակացությունները, որոնք հետագայում կարող են օգտագործվել երեխայի և նրա ծնողների հետ աշխատելիս»: [5]

Նույն հոդվածի հեղինակները էական դիտարկում են անում, որ «ուսուցիչը պետք է օգնի ծնողներին բացահայտելու երեխայի հնարավորությունները, նրա բնավորության գծերը, հատկապես ուշադրություն դարձնի և զարգացնի դրանք»:[6]

Ընդհանրապես ժամանակակից մանկավարժությունը հիմնվում է դրական ծնողավարության հենքի վրա, այսինքն՝ կարևոր է, որ ոչ թե սխալները միայն ուղղվեն, այլ առավելապես շեշտադրվեն երեխայի դրական գծերը: Այս մեթոդաբանությունը ուղղված է և՛ ծնողներին և ուսուցիչներին:[7]

Հոգեբանները նկատում են, որ այն երեխաները, որոնց ծնողները ավելի շատ են ոգևորում երեխային իր ուսուցման մեջ, աջակցում են նրան դժվարությունները

[5] Колективная работа, Совместная работа учителья с родительями младших школьников, Молодой ученый, N 52, 2019, стр. 279.

[6] Նույն տեղում:

[7] Դրական ծնողավարման ձեռնարկ. Երեխաների դեմ բռնության կանխարգելում, Երևան, 2011:

հաղթահարելու գործում (պետք է շեշտել, որ աջակցում են և ոչ թե նրա փոխարեն լուծում խնդիրը), ավելի մեծ հաջողությունների են հասնում ուսման մեջ։

Նույն ուսումնական ֆորումում հոգեբանը շեշտադրում է նաև գնահատականի հարցը։ Չափազանց կարևոր է ծնողի ադեկվատ արձագանքը ուսուցչի դրած գնահատականին։ Պետք չէ երեխային փնովել վատ գնահատականի համար։ Միևնույն ժամանակ վատ գնահատականը աշակերտին նվաստացնելու միջոց չպիտի լինի ուսուցչի համար։[8]

Այս և այլ հարցերը հաճախ են ուսուցիչների և ծնողների միջև կոնֆլիկտներ ստեղծում։

«Բոլոր մարդիկ կարող են սխալվել։ Ուսուցիչներն ու ծնողները ևս բացառություն չեն։ Երբեմն ոչ մեկը, ոչ մյուսը չեն փորձում դա խոստովանել։ Ինչու՞։ Դրդապատճառները կարող են լինել տարբեր։ Բայց ամենից հաճախ «աչքից ընկնելու», «հեղինակությունը կորցնելու» վախն է կամ «պարտությունը»։ Առանձնապես դժվար է խոստովանել սխալները, որոնք բերել են առճակատման և կոնֆլիկտի»։[9]

Երեխայակենտրոն վարքագիծը կարող է օգնել, որ փոխադարձ հարգանքի, բարիդրացիության հիման վրա հարաբերություններ ստեղծվեն, որը կարող է միայն օգնել աշակերտին։

[8] Письмо министерства Просвещения РФ от 27 марта 2020 года № 07-2446 Рекомендации для усиления психологической поддержки школьников, учителей, родителей// https://www.garant.ru/products/ipo/prime/doc/73709076/

[9] Марьяна Безруких, Родитель и учитель.как понять друг друга, Москва, 2010, стр. 100.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ ենքննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը,

ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները:

⇒ Դասղեկը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.

⇒ Երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,

⇒ Ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական կաբինետների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,

⇒ Ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ, համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը:

Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողներիև երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը:

Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Իսկ ինչպե՞ս արթնացնել ուսուցիչների նախաձեռնողականությունը, դպրոցական կոլեկտիվում ստեղծել մանկավարժական նախագծի իրականացման ուղղությամբ գործունեության դրական դրդապատճառներ: Այս ամենը հնարավոր է

դասղեկների կողմից երիտասարդ մանկավարժներին կոնկրետ աջակցություն ցուցաբերելու միջոցով: Սկսնակներին հարկավոր է օգնել դասարանական կամ դպրոցական ծնողական ժողովներում զեկուցումներ կամ ելույթներ նախապատրաստելիս: Այս ուղղությամբ աշխատանքի նախագծման ժամանակ պետք է ամրապնդել դպրոցի և ծնողների փոխհարաբերությունները, ձևավորել արդյունավետ գործող ծնողական խորհուրդ՝ հավասարապես բաժանելով կրթության որակի պատասխանատվությունը: Համագործակցության համակարգում իրականացվում են.

. դասարանական և համադպրոցական ծնողական ժողովներ,
. անհատական խորհրդատվություն,
. հանդիպումներ մանկավարժների և հոգեբանների հետ:

Ծնողների խորհրդատվությունն այսօր դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղությունն է: Ծնողների մեծամասնությունը ինքնակրթության համար ժամանակ չի ունենում: Սովորաբար խորհրդատվության համար դիմում են դպրոցին: Որպես կանոն, դա լինում է հատկապես ծայրահեղ իրավիճակներում՝ երեխայի վատ առաջադիմության կամ վարքի դրսևորման ժամանակ: Խորհրդակցության հիմնական նպատակը ծնողների կողմից երեխայի հիմնախնդիրների, նրա անձի մասին ամբողջությամբ ավելի խոր և օբյեկտիվ պատկերացում ունենալն է, սեփական դաստիարակչական ուղեծրի ու կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ շփման միջոցների որոշումը:

Մեր կարծիքով՝ Դպրոցական համակարգում պետք է գործի հոգեբանական, մանկավարժական և բժշկական խորհրդատվության ծառայություն, որը կստանձնի բեռնվածության մասը և բավական հաջողությամբ կլուծի ծագող հիմնախնդիրները: Հոգեբանը կամ սոցիալական մանկավարժը կարող են օգնել՝ որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը: Հատկապես հենց նրանք են տիրապետում այնպիսի տեղեկույթների, որոնք երբեք չեն ձեռքբերվում հարցման միջոցով: Ակնհայտ է, որ դժվար է դպրոցում իրականացնել յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ փոխներգործությունն ու համագործակցությունը իրենց մեջ ներառող հիմնախնդիրների ամբողջ ծավալով: Սակայն հարկավոր է

հոգեբանամանկավարժական ուղեկցությունը կազմակերպել այնպես, որ երեխան օգնություն և փոխըմբռնում որոնի ընտանիքում: Այդպիսի ծառայության նպատակը, թերևս, երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման նպաստավոր պայմանների ապահովումն է, իսկ ամենակարևոր պայմաններց մեկը, անշուշտ, դպրոցի ու ընտանիքի համագործակցությունն է:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության ու փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս, երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքին ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Ծնողների խորհրդատվության կազմակերպումը դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Մի կողմից այն խիստ անհատական է, մյուս կողմից էլ անհրաժեշտ է հետևել ծնողների և երեխաների դժվարություններին, որպեսզի մանկավարժական շտկողական գործունեությունը չլինի ժամանակավրեպ: Այսպիսի խնդիրների լուծման լավագույն տարբերակը դպրոցական հոգեբանի հաստիքի ստեղծումն է: Իսկ դպրոցի հիմնական խնդիրը կլինի նմանատիպ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի մշակումը և համակարգային վերլուծությունը: Ծնողների խորհրդատվությունը կարելի է կազմակերպել երկու տեսանկյունից՝ մեթոդական (այն ամենը, ինչ վերաբերում է ուսումնական ծրագրերի յուրացմանը, առանձին աշակերտների կրթական գործընթացի հետագծին, նոր ընդունված երեխաներին, օժտված երեխաների լրացուցիչ կրթությանը) և հոգեբանական (այն ամենը, ինչ վերաբերում է երեխայի անհատական առանձնահատկություններին ու նրա հանրայնացմանը):

Երկու դեպքում էլ անհրաժեշտ է պահպանել փոխվստահության, փոխադարձ հարգանքի, խորհրդատվության նկատմամբ հետաքրքրությունների, կոմպե-տենտության, ծնողների միջավայրում խնդիրներն ինքնուրույն լուծելու

դիրքորոշումների մշակման, խորհրդատվությունների որակի ապահովման սկզբունքները: Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները զբաղված մարդիկ են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Փորձարարական հետազոտության նպատակը: Նախապես կազմված հարցաթերթիկի միջոցով ուսումնասիրության ենթարկել 30 ծնողների պատկերացումները և ընտանեկան դաստիարակության պայմանները՝ հետապնդելով ընտանիքում դաստիարակության արդյունավետության պայմանների ստեղծման հիմնախնդիրների բացահայտման և այդ հիմնախնդիրների վերացման շուրջ մեթոդական ցուցումներ մշակելու նպատակ:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտությանը մասնակցել են 30 ծնող:

Փորձարարական հետազոտության փուլերը: Փորձարարական հետազոտությունը անցկացվել է երեք փուլերով: Առաջին փուլում հարցաթերթիկները բաժանվել են հետազոտության ընտրանքը կազմող 30 ծնողների: Հարցաթերթիկները լրացնելու և արդյունքները ստանալուց հետո 2-րդ փուլում հետազոտվողների հետ նաև անցկացվել են բանավոր հարցումներ՝ պարզելու համար այս կամ այն պատասխանի կիրառելիության մեխանիզմներն ընտանիքում:

Երրորդ փուլում ձևավորող գիտափորձից հետո կատարվել է հարցաթերթիկների վերլուծություն և մշակվել է բացահայտված հիմնախնդիրների խորհրդատվության և մեթոդական ցուցումների ծրագիր:

Մեթոդիկաների նկարագրություն:

Տեսական վերլուծության արդյունքում մենք հանգեցինք նրան, որ մեր հետազոտության նպատակի համար առավել նպատակահարմար են հետևյալ թեստերի ընտրությունը և օգտագործումը:

✓ «Ընտանիքում դաստիարակության արդյունավետության պայմանների ստեղծման հիմնախնդրի վերաբերյալ ծնողների հարցում հարցաթերթիկ) **«Ընտանեկան սոցիոգրամի» մեթոդը**

Մեթոդիկան թույլ է տալիս որոշ չափով բացահայտել ընտանիքի անդամների սոցիոմետրական դիրքերը և նրանց հաղորդակցության բնույթը, ընդ որում, սոցիոմետրական մեթոդիկան չկիրառելու դեպքում դրանք մնում են չգիտակցված: Այս մեթոդը բավականին արդյունավետ է և էապես օգտակար հոգեթերապևտներին: Ուսումնասիրվողին տալիս են ձևաթղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա գծված է 110 մմ տրամագծով շրջանագիծ: Հարցվողին հրահանգ է տրվում այդ շրջանագծի ներսում, տարբեր տրամագծի շրջանակների տեսքով տեղադրել ինչպես սեփական անձը, այնպես էլ ընտանիքի մնացած անդամներին: Հրահանգվում է, որ յուրաքանչյուր հարցվող այդ աշխատանքը պետք է կատարի ինքնուրույն՝ առանց այլ անձանց հետ խորհրդակցելու: Ուսումնասիրվողի վերաբերյալ տեղեկությունները պարզվում են ուսումնասիրողի կողմից հետևյալ հարցադրումների կատարման միջոցով՝

1) Ընտանիքի քանի՞ անդամ է ներկայացված շրջանագծի ներսում,

2) Ինչպիսի՞ն են ընտանիքի անդամներին ցույց տվող շրջանակների մեծությունները,

3) Ինչպիսին է այդ շրջանակների փոխադարձ դասավորությունը,

4) Ինչպիսին է այդ շրջանակների փոխադարձ հեռավորությունը:

Պարզվում է, որ այս հարցադրումները հոգեբանական տեսակետից բավականին տեղեկատու են: Աշխատանքն ավարտելուց հետո հարցվողը ստորագրում է սոցիոգրամի տակ:

Արդյունքների ամփոփման հիմքում դրվում են շրջանակների թիվը, շրջանակների մեծությունը, շրջանակների դասավորությունը, շրջանակների հեռավորությունը:

1) Շրջանակների թիվը: Հետազոտողն առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի, թե քանի անձից է բաղկացած տվյալ ընտանիքը և այդ անդամներից քանիսն են ներկայացված սոցիոգրամում: Կան հարցվողներ, ովքեր շրջանագծի մեջ իրենց ընտանիքի ոչ բոլոր անդամներին են ներկայացնում: Սա վկայում է, որ «դուրս թողնված» անդամները նրա համար նշանակալից չեն կամ էլ նույնիսկ մերժված են:

Նման «մոռացումը» վկայում է հարցվողի և չընդգրկված անձի միջև բախումնային հարաբերություններ առկայության մասին:

2) Շրջանակների մեծությունը: Ընդհանուր սկզբունքն այն է, որ ինչքան ավելի մեծ է այն շրջանակը, որով ներկայացված է անձը, այնքան ավելի կարևոր ու նշանակալից է համարվում նա:

3) Շրջանակների դասավորությունը: Յուրաքանչյուր անհատի դեպքում այդ դասավորությունը, բնականաբար, տարբեր է: Եթե նա ընտանիքի որևէ անդամի տեղադրում է շրջանագծի (թեստային դաշտի) մի անկյունում և շատ փոքրիկ նշանով, ապա դա նշանակում է, որ նա մեկուսացնում կամ մերժում է նրան: Ընտանիքի նշանակալից անդամներին ուսումնասիրվողները ներկայացնում են թեստային դաշտի կենտրոնում և մեծ նշանով:

Հոգեբանական տեսանկյունից կարևոր է նաև, թե հարցվողն ինքն իրեն որտեղ և ինչ չափերով է ներկայացնում: Եթե նա իր «Ես»-ը տեղադրում է մեծ շրջանագծի կենտրոնում և այն էլ մեծ չափերով, ապա կարելի է եզրակացնել, որ նա ունի ուժեղ արտահայտված եսակենտրոնություն և բարձր ինքնագնահատական: Իսկ եթե ներկայացնում է ծայրամասում և փոքր չափերով, ապա կարելի է խոսել նրա ճնշվածության և թերարժեքության բարդույթի առկայության մասին:

4) Շրջանակների հեռավորությունը: Այդ ցուցանիշը վերաբերում է ընտանիքի անդամների հուզական փոխհարաբերություններին, ուսումնասիրվող անհատի ենթագիտակցական դրսևորումներին: Մեկնաբանության հիմնական սկզբունքը հետևյալն է՝ որքան միմյանց ավելի մոտ են ներկայացված ընտանիքի որոշ անդամներ, այնքան հուզականորեն ավելի մոտ, մտերիմ են նրանք:

Եթե շրջանագծի մեջ ընտանիքի անդամները միմյանցից հեռու են պատկերված, ապա կարելի է ենթադրել, որ նրանց միջև կան բախումնային հարաբերություններ, փոխադարձ հուզական մերժում, միմյանց հետ շփվելու ցանկության թուլություն կամ բացակայություն:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքում դաստիարակության արդյունավետ պայմանների որոշումը մեծապես կախված է ծնողների կողմից երեխաների դաստիարակության գործընթացի իրականացման ոճի նախընտրությունից:

Գծապատկեր 1.



Հարցված ծնողների 17% -ը հակված է դաստիարակության գործընթացի ավտորիտար ոճին, 36%-ը՝ հանդուրժողական, իսկ 47%-ը՝ ավտորիտատիվ:

1.Այն ծնողները, որոնք հակված են ավտորիտար դաստիարակչական մեթոդին, սովորաբար ջղային են, դժգոհ, իշխող, կոպիտ, սահմանափակ են արտահայտում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքեր ասելը լրացուցիչ ճոխություն է և անընդունելի: Նման հարաբերություններում ծնողը միշտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են ըմբոստ, վախկոտ, ջղային, դժբախտ և հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում: Նման դաստիարակության արդյունքում տուժում են երեխա-ծնող հարաբերությունները, անխուսափելի են վեճերը:

2.Դաստիարակչական երկրորդ ոճը հանդուրժողականն է: Նման ծնողները ջերմ են և հուզական, բայց շատ սահմանափակ հսկողությամբ, քիչ են մասնակցում երեխայի կյանքին և հեշտությամբ տեղի տալիս երեխայի քմահաճույքներին: Այս ծնողը առավել շահագրգռված է, որ երեխայի հետ չհակադրվի և չվիճաբանի: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, կարծում են, թե ծնողները չեն մտածում իրենց մասին, թելադրում են ծնողներին իրենց կամքը և թերահավատությամբ են վերաբերվում նրանց: <<Ժամանակակից>> ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այս երևույթին, երբ մայրը, կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում է ինքնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալական վարք:

3.Երրորդ ոճը ավտորիտատիվն է: Նման ծնողները լինում են ջերմ, հանգիստ, չափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում են նրա հետ և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են դրական ծնող-երեխա հարաբերություններ ստեղծելուն, նրանց հարաբերություններում իշխում է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են, անկեղծ:

Երկրորդ հարցի, այն է ի՞նչ նրբություններ և կանոններ են ծնողները հաշվի առնում երեխայի դաստիարակության գործում, տրման արդյունքում պարզեցինք, որ երեխաների դաստիարակության գործում ծնողները հաշվի են առնում հետևյալ նրբությունները և կանոնները՝

· Հարկավոր է լինել սիրալիր երեխայի հանդեպ: Սերը, գուրգուրանքը փոքրիկին թույլ է տալիս զգալ իրեն պաշտպանված, վստահ իր անձի նկատմամբ:

· Ծնողների պահանջը պետք է լինի մշտական, տրամադրության հետ չփոխի և համապատասխան լինի երեխայի հնարավորությանը: Չի կարելի պահանջել նրանից կատարել իր ուժերից վեր խնդիր: Դա խեղաթյուրում է երեխայի

կամքի ձևավորումը, նրա նպատակասլացությունը:

· Հարկավոր է թողնել, որ փոքրիկը ինքնուրույն գնահատի իր արարքը: Նույնիսկ եթե նա սխալ է գործում, մի շտապեք նրան կանգնեցնել, թողեք թող վերջացնի, հետո նոր բացատրեք, թե ինչը ճիշտ չի արել: Դա նպաստում է փորձի ձեռքբերմանը և բարձրացնում է նրա ինքնագնահատականը:

· Երեխայի դաստիարակությունը այնպես պետք է կառուցել, որ նրա մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի: Խոսքը ոչ միայն դպրոցական կարգապահության, այլ նաև շրջապատող աշխարհի մասին է: Երեխան պետք է իմանա, որ նա կարող է ճանաչել աշխարհը, ինչ որ նոր հետաքրքիր բան հայտնաբերել, կարևոր հայտնագործություններ անել: Երեխան պետք է դրանից հաճույք ստանա: Դրանով ձևավորվում է հետաքրքրությունը:

Այսպիսով, վերլուծելով ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակների դրսևորման հարցը, պարզեցինք, որ հետազոտվողներից 50%-ի մոտ շարժումների առկա է կոնֆիլկտային հարաբերություններից ցածր մակարդակ, 25%-ի մոտ՝ միջին մակարդակ, իսկ 25% բարձր մակարդակ:

Ստացված տվյալները տոկոսային հարաբերությամբ ներկայացնենք գրաֆիկական պատկերի տեսքով :



Հարցին, թե ո՞ր ավանդույթներն ու դրական սովորույթներն եք օգտագործում որպես արդյունավետ դաստիարակության կազմակերպման պայմանների ապահովման նախադրյալներ, տրված պատասխանների հիմքով ստացել ենք

հետևյալ ընդհանրացված պատկերը՝ «Արդի ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական,տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործընթացները, աշակերտական կոլեկտիվների գործունեությունը, արտադասարանային, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը: Դաստիարակության բովանդակության համակարգի մեջ կարելի է ընդգրկել տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, նաև կրոնաբարոյական դաստիարակությունը: Դաստիարակության բովանդակությունն ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն»:

Առաջադրված թեստի երկրորդ մասով ուսումնասիրվում է երեխաների բավարարվածությունը ուսումնական գործընթացի վարման մեթոդիկայից: Արդյունքների ամփոփման համար հաշվում ենք «Այո» պատասխանները և ըստ քանակի որոշում արդյունքը՝

կրթական գործընթացից բավարարվածության ցածր մակարդակ - 6 - 8

կրթական գործընթացից բավարարվածության միջին մակարդակ - 9 - 11

կրթական գործընթացից բավարարվածության բարձր մակարդակ - 12 – 13

Կրթական գործընթացից բավարարվածության մակարդակի գնահատման արդյունքները

Գիտելիքների մակարդակ															
Հետազոտվողներ	A1	A2	A3	A4	A5	A6	A7	A8	A9	A10	A11	A12	A13	A14	A15
Յուցանիշներ	10	12	9	10	11	8	10	7	12	13	13	12	11	12	10
Հետազոտվողներ	A16	A17	A18	A19	A20	A21	A22	A23	A24	A25	A26	A27	A28	A29	A30
Յուցանիշներ	12	13	10	11	11	13	13	13	12	8	10	11	12	12	13

30 հոգուց բաղկացած հետազոտվողների մոտ թեստի արդյունքներով կրթական գործընթացից բավարարվածության ցածր մակարդակ առկա է

հարցվածների միայն 10%-ի մոտ /3 կրտսեր դպրոցական/: Հետազոտվողների 40,0%-ի մոտ /12 կրտսեր դպրոցական/ առկա է կրթական գործընթացից բավարարվածության միջին մակարդակ: Ուսումնասիրվող խմբի 50,0%-ի մոտ /15 կրտսեր դպրոցական/ կրթական գործընթացից բավարարվածության ցածր մակարդակը կարելի է բնորոշել բարձր:



Վերոշարադրյալ երկու վերլուծություններից գալիս ենք այն եզրահանգման, որ ուսումնական գործընթացը վարելու մեթոդիկայից երեխաների բավարարվածության բարձր մակարդակը վկայում է այն մասին, որ իրապես արդարացված է երեխաների՝ առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքների գերազանց իմացությունը: Սակայն գտնում ենք, որ կարիք կա կիրառելու նոր միջոցներ կրտսեր դպրոցականների գոհունակության և գիտելիքների բարձրացման ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ.

• Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:

• Ուսուցիչն ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի սովորողների, վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ: • Ուսուցիչը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ սերտորեն համագործակցելով սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:

• Ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

• Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական-լուսավորչական խորհրդատվություն՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց մանկավարժական գիտելիքները:

• Ուսուցիչը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ ակնկալելով նրանցից հետադարձ կապ:

• Ուսուցիչն ու սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացների վերաբերյալ որոշումներ ընդունեն համատեղ:

• Ուսուցիչը պետք է սահմանված կարգով իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրներն ու դրանց լուծում տալ համատեղ աշխատանքի արդյունքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զաքարյան Ա., Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Հայ կինը, Գանկևիչի դասախոսությունից, Երևան, 2004
2. Ինքնության հարցեր,-Տարեգիրք, 2002.
3. Սահակյան Ա., Ժառանգություն և ժառանգորդ, էջ 117,-Գենդերային հետազոտություններ, 2001.
4. Алешина Ю.Е. Цикл развития семьи: исследования и проблемы // Вестник МГУ. Сер.14. Психология. - 1987. - N2.,
5. Андреева Т.В. Семейная психология: Учеб. пособие. СПб.: Речь, 2004.
6. Антокольская М.В. Лекции по семейному праву. – М.: Юрист, 1995.
7. Артамонова Е.И., Екжанова Е.В., Зырянова Е.В. Психология семейных отношений с основами семейного консультирования. М.: Издательский центр «Академия», 2002.
8. Добреньков В. И., Кравченко. А. И. Социальные институты и процессы. М.: МГУ, 2000.
9. Карабанова О.А. Психология семейных отношений и семейного консультирования: Учебное пособие. М.: «Гардарики», 2005.
10. Карабанова О.А. Психология семейных отношений с основами семейного консультирования. - М., 2006.
11. Кратохвил С. Психотерапия семейно-сексуальных дисгармоний. М.: Медицина. 1991.
12. Лысова А.В. Психология семьи. Часть 2. Учебное пособие. - Владивосток: ТИДОТ ДВГУ, 2003.